

**ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ**

-----«»-----

Կենսագրական Գիծեր

Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան, աւագանի անունով՝ Պօղոս, ծնած է Հալէպ, 24 Յունիս 1948-ին: Նախնական ուսումը ստացած է Հալէպի Հայկազեան Վարժարանէն ներս:

1961-ին ընդունուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը:

1966-ին ընդունուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանը:

1968-ին ձեռնադրուած է Սարկաւագ:

1971-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ Երջանկայիշատակ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի՝ վերակոչուելով Նուրիան Արեղայ:

1971-72 նշանակուած է Ժառանգաւորաց Վարժարանի փոխ-տեսուչ:

1972-73 նշանակուած է Զուիցերիոյ (ժնեւ) Հոգեւոր հովիւ:

1973-ին ստացած է Վարդապետական աստիճան:

1976-77 նշանակուած է Ժառանգաւորաց Վարժարանի տեսուչ:

1974-80 նշանակուած է Իսրայէլի (Հայֆա-Եաֆա) հայ գաղութներուն հոգեւոր հովիւ:

1980-82 նշանակուած է Հոլանտայի հայոց հոգեւոր հովիւ:

1982-ին Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հրաւերով մեկնած է Նիւ Եորք եւ ուսանած Եպիսկոպոսական Ընդհանուր Աստուածաբանական ճեմարանէն ներս եւ աւարտած անոր եռամեայ շրջանը:

1985-93 եղած է Սփրինկֆիլտ քաղաքի հայոց (Մէտչուսեց) հոգեւոր հովիւ:

1994-ին եղած է Հիւսթընի (Թեքսաս) Սուրբ Գեորգ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ:

1998-ին ընտրուած է Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ս. Աթոռի Լուսարարապետ:

1999-ի Դեկտեմբեր 14-ին ձեռնադրուած եւ օծուած է Եպիսկոպոս ձեռամբ՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի:

2009-ին Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրիան Արք. Մանուկեանը նշանակած է Պատրիարքական Փոխանորդ:

2013 Յունուար 23-ին ընտրուեցաւ Երուսաղէմի Հայոց 97-րդ Պատրիարք Երուսաղէմի:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը հրատարակած է երկու պատմական վէպեր, «Եւ եղեւ Լոյս», եւ «Դարձեալ եղեւ լոյս», ինչպէս նաեւ 52 քարոզներու հատոր մը, Ս. Յակոբայ Բեմէն»: